10.56653/18290361-2025.16-34

Արուսյակ Ղազարյան
Հայաստանի պատմության թանգարան
ghazaryana.historymuseum@gmail.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԳԻՏԱ-ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ. ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ[1]

Հիմնաբառեր. Հայաստանի պատմության թանգարան, գիտա-մասսայական աշխատանքներ, կրթական ծրագրեր, հանրահռչակում, մարքեթինգ

Ներածություն

Թանգարանները, որպես գիտամշակութային կենտրոններ, կատարում են կարևոր դեր մշակութային ժառանգության պահպանման և տարածման գործում: Վերջին տարիներին թանգարանների գործունեությունը միտված է ոչ միայն հավաքածուի պահպանմանը, այլև դրա կրթական ու գիտական նշանակության բարձրացմանը: Գիտա-մասսայական աշխատանքները, հանրահռչակման և կրթական ծրագրերը, ինչպես նաև մարքեթինգային գործիքները դարձել են թանգարանների արդյունավետ գործունեության անբաժանելի մասը՝ նպաստելով հասարակության լայն շրջանակներում դրանց սոցիալական նշանակության և հասանելիության մեծացմանը:

Մեր ուսումնասիրության նպատակն է ներկայացնել Հայաստանի պատմության թանգարանի գիտա-մասսայական, հանրահռչակման և կրթական ծրագրերը՝ ցույց տալով դրանց դերը մշակութային ժառանգության պահպանման, տարածման և լայն հանրությանը հասանելի դարձնելու գործում:

Աշխատանքի հիմնական խնդիրներն են դիտարկել և վերլուծել այն մեխանիզմները, որոնց միջոցով գիտա-մասսայական գործունեությունն ու կրթական ծրագրերը նպաստում են թանգարանի առաքելության իրականացմանը, Հայաստանի պատմության թանգարանի օրինակով ուսումնասիրել կուտակված փորձը մշակութային ժառանգության հանրահռչակման և այն լայն հասարակական շերտերի համար հասանելիության ապահովման ուղղությամբ, քննության առնել թանգարանային գործունեության մեջ մարքեթինգային գործիքների կիրառման արդյունավետությունը, ինչպես նաև համակարգել ու գիտականորեն ներկայացնել Հայաստանի պատմության թանգարանում շուրջ մեկ դար կիրառված գիտա-կրթական և հանրահռչակման բազմազան ձևաչափերը՝ շեշտադրելով դրանց դե-

* Ստացվել է 15.05.2025 թ., ուղարկվել է գրախոսության՝ 20.08.2025 թ., ընդունվել է տպագրության՝ 09.12.2025 թ:

[1] Շնորհակալություն ՀՊԹ հնագիտության բաժնի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Արմինե Ջոհրաբյանին՝ հոդվածին աջակցելու համար:

ը հասարակության կրթական զարգացման, մշակութային դաստիարակության և հանրային ներգրավվածության ապահովման համատեքստում:

Գիտա-մասսայական և գիտա-կրթական գործունեության կազմակերպման առանձնահատկությունները Հայաստանի պատմության թանգարանում

Այսօր Հայաստանի պատմության թանգարանն իր ավելի քան 400.000 ցուցանմուշով ընդհանրական պատկերացում է տալիս հայ ժողովրդի պատմության վերաբերյալ՝ սկսած քարի դարից մինչև մեր օրերը:

Իր 105-ամյա գործունեության ընթացքում թանգարանը հետևողականորեն իրականացրել է իր հիմնական առաքելությունը՝ ժառանգության հավաքում, պահպանում, ուսումնասիրություն և ցուցադրություն: Այս գործառույթներից զատ, թանգարանի գործունեության կարևոր ուղղություն են կազմում ներկայացման և հանրահռչակման աշխատանքները, որոնք ոչ միայն ներկայացնում են թանգարանի հավաքածուները, այլև կարևոր դեր են խաղում կրթական ծրագրերի իրականացման և հանրային իրազեկման գործում: Դրանք նպաստում են պատմամշակութային ժառանգության ճանաչմանը, պահպանմանն ու արժևորմանը՝ ապահովելով մշակութային ժառանգության շարունակականությունը:

Թանգարանի գործունեության առաջին երկու տասնամյակներում, ունենալով աշխատակիցների խիստ սակավ թվաքանակ, կազմակերպվող ցուցադրությունների շրջանակում տրվող բացատրական աշխատանքները հիմնականում իրականացնում էին գիտաշխատողները: 1939 թ.-ի հրամանագրքում առաջին անգամ հանդիպում ենք տեղեկության, որ նշյալ տարվա հոկտեմբերի 1-ի թիվ 61 հրամանով թանգարանի ցուցադրական տարածքների կրկնապատկման և այցելուների սպասարկման բարելավման նպատակով որոշվել է աշխատանքի ընդունել նոր աշխատակիցներ, այդ թվում՝ 4 էքսկուրսավար (բացատրող), որոնց գլխավոր խնդիրն էր ներկայացնել թանգարանի ցուցանմուշները այցելուներին՝ գիտական հենքի վրա հիմնված բացատրություններով: Այնուամենայնիվ, էքսկուրսավարների ներգրավվածությունը եղել է անհատական բնույթի, և թանգարանում նշյալ ժամանակաշրջանում դեռևս հատուկ բաժին նախատեսված չի եղել նրանց համար (Հրամանագիրք, 1939): 1945 թվականին, Հայաստանի պատմության թանգարանի հաստիքացուցակում արդեն արտահայտված էր թանգարանի նոր կառուցվածքը, որտեղ ցուցադրության բաժինը դարձել էր առանցքային մաս: Այս բաժինը ներառում էր մի շարք նոր հաստիքներ, ինչպիսիք էին էքսկուրսավարները (բացատրողներ), հսկիչ-հավաքարարները, նկարիչը և լաբորանտը: Նրանց հիմնական գործառույթը եղել է ոչ միայն ցուցադրության ներկայացումը, այլ նաև ցուցանմուշների պահպանության խնդիրները:

1958 թվականին հսկիչ-հավաքարարները, որոնք սկզբում ներառված էին ցուցադրության բաժնում, առանձնացվեցին որպես կրտսեր սպասարկող անձնակազմ՝ վերագրելով առավել սահմանափակ գործառույթներ:

Ցուցադրության բաժնին զուգահեռ, դեռևս 1930 թ.-ից թանգարանում գործել է Ճարտարապետության բաժինը, որի հիմնական գործառույթները եղել են ցու-

ցահանդեսային աշխատանքների իրականացումը, վերականգնման, կառուցողական և կամերալ աշխատանքները:

Թանգարանի՝ ցուցանմուշների պահպանման և ցուցադրման գործառույթին զուգահեռ գիտակրթական գործունեության զարգացման կարևոր քայլերից մեկը դարձավ 1960 թ.-ի որոշումը, այն է՝ ««ՍՄԿՊ կենտկոմի 1960 թ. հունվարի 9-ի «Արդի պայմաններում պարտիական պրոպագանդայի խնդիրների մասին» որոշման հաջող կենսագործման համար ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի նախագահությունը, Պետական Պատմական թանգարանի դիրեկցիայի և պարտիական կազմակերպության միջնորդությամբ, 1960 թ. ապրիլին թանգարանում ստեղծվեց գիտա-մասսայական աշխատանքի բաժին: Թանգարանի դիրեկցիան ավելացրեց մասսայական աշխատանքով զբաղվող աշխատողների քանակը» (Բաժնի հաշվետվություն, 1960, 1): Գիտա-մասսայական բաժինը ըստ էության ստեղծվեց ցուցադրության բաժնի հիման վրա: Այդ տարում բաժինը իրականացրեց 670 էքսկուրսիա, որը նախորդ տարվա համեմատ 1.5 անգամ ավելի էր (Բաժնի հաշվետվություն, 1960, 1):

Նորաստեղծ բաժնի նպատակն էր էքսկուրսիոն և բացատրական աշխատանքների, գիտահանրամատչելի ծրագրերի և միջոցառումների միջոցով նպաստել լայն հանրության համար հավաքածուների վերաբերյալ գիտական բովանդակության հասանելիությանը, ինչպես նաև բարձրացնել թանգարանի ճանաչելիությունը և դերակատարությունը մշակութային ժառանգության պահպանման ու տարածման գործում:

1960 թ. սկսած՝ թանգարանում սկսեց գործել լեկտորիում, որն ուղղված էր գիտակրթական ծրագրերի ակտիվացմանը: Այս լեկտորիումի շրջանակում կազմակերպվում էին տարբեր թեմատիկ զեկուցումներ, զրույցներ և դասախոսություններ, որոնք վարում էին թանգարանի աշխատակիցները: Ծրագիրն ունեցել է հանրային կրթական նշանակություն՝ նպատակ ունենալով դպրոցականներին, ուսանողներին, հիմնարկների ու ձեռնարկությունների աշխատակիցներին և այլ լսարանների փոխանցել խորը գիտելիքներ թանգարանի հավաքածուների, մշակութային ժառանգության և պատմության մասին: Երկու տարի անց արդեն, զարգացնելով լեկտորիումի աշխատանքները, առանձնացվել է երկու ցիկլ՝ ընդհանուր և աշակերտական: Ընդհանուր ցիկլի շրջանակում զեկույցներով հանդես են եկել Կ. Ղաֆադարյանը, Բ. Առաքելյանը, Ս. Երեմյանը, Վ. Մելիքսեթյանը, Հ. Մնացականյանը և այլք:

Ոգևորվելով լեկտորիումի նկատմամբ դրսևորված հետաքրքրությունից և մշակութային ծրագրերի հանդեպ մեծ պահանջարկից՝ 1960-ական թվականներին Հայաստանի պատմության թանգարանում մեկնարկեց նաև կինոլեկտորիումը, որը կարևոր գիտա-հանրամատչելի նախագիծ դարձավ և ունեցավ մեծ ազդեցություն հասարակության շրջանում: Ցուցադրվող ֆիլմերը պարունակում էին բացառիկ տեղեկություններ՝ հնագիտական պեղումների, Հայաստանի ճարտարապետության, ինչպես նաև Եգիպտոսի, Հունաստանի և այլ երկրների պատմական հուշարձանների մասին: Կինոլեկտորիումի շրջանակում ցուցադրված պատմահնագիտական, մշակութային և գիտահանրամատչելի այլ բնույթի վավերագրա-

կան կինոնկարները ոչ միայն հնարավորություն էին տալիս այցելուներին ծանոթանալու տարբեր ոլորտների վերջին բացահայտումներին, այլև նպաստում էին մշակութային և պատմական գիտելիքների տարածմանը հանրության շրջանում:

1964 թվականին կինոլեկտորիումը, շարունակելով իր ակտիվ գործունեությունը, տարվա ընթացքում հասցրեց կազմակերպել 150 կինոսեանս, որոնց մասնակցել էր շուրջ 4000 դիտող: Սեանսների թվաքանակի աճին նպաստեց Տ. Խաչատրյանի «Թանգարան բաց երկնքի տակ» կարճամետրաժ ֆիլմի ձեռքբերումը, որը կարևոր նշանակություն ունեցավ թանգարանի հանրահռչակման գործում: Հետաքրքիր է, որ տարիների ընթացքում կինոցուցադրությունների ծավալը զգալիորեն մեծացավ, ինչի հետևանքով առաջացավ կինոֆոնդի պարբերաբար թարմացման անհրաժեշտություն՝ ապահովելու ավելի բազմազան և արդիական բովանդակություն: Գիտա-մասսայական աշխատանքների բաժնի վարիչ Մ. Խոնդկարյանն իր առաջարկություններում նշում է՝ «Առաջիկայում անհրաժեշտ է օգտվել ժամանակակից և կինո նկարահանումների միջոցով հաստատագրման ենթարկել ոչ միայն ճարտարապետական և հնագիտական առանձին խոշոր կոմպլեքսների ներկա վիճակը, այլև ազգագրական բազմատեսակ երևույթներ, կենցաղային սովորույթներ, ծեսերը, հնուց եկող տարազային ձևերը, պաշտամունքային մնացուկները և այլ տվյալները... ժամանակը չէ, արդյոք, որ մեր պատմա-ազգագրական արշավախումբը, որն ամեն տարի մեկնում է հայկական գաղթօջախները, կարողանար կինոժապավենի վրա վերցնել այն ամենը, ինչը դեռ պահպանվել է» (Տարեկան հաշվետվություն, 1964, 12):

Ըստ էության կինոլեկտորիումի անվանդույթների շարունակությունը դարձավ վերջին տարիներին թանգարանի կողմից կազմակերպվող ժամանակավոր և վերաբացվող մշտական ցուցադրությունների, ինչպես նաև առանցքային նմուշների վերաբերյալ ֆիլմերի պատրաստումը և ցուցադրումը՝ ինչպես ցուցասրահներում, այնպես էլ թանգարանի դահլիճում ու թվային հարթակներում: Այսպես օրինակ, 2024թ.-ին երկարատև համագործակցություն ծավալվեց «Արմենպրես» լրատվական գործակալության հետ, որի հետ համատեղ իրականացվեց «Պատմության գանձերը» նախագիծը՝ նկարահանելով տեղեկատվական հոլովակներ թանգարանում ցուցադրվող բացառիկ նմուշների վերաբերյալ: Հոլովակները ներկայացնում էին ոչ միայն պատմական նշանակություն ունեցող առարկաները, այլ նաև դրանց պատմությունը, կիրառությունը և նշանակությունը մեր մշակութային ժառանգության համար:

Թանգարանի հանրահռչակման աշխատանքների հնարավոր նոր ձևաչափերի ընդգրկման տեսանկյունից արժանահիշատակ է 2024թ.-ից «Բուն Թիվի» մեդիահարթակի հետ համատեղ թանգարանի ժամանակավոր ցուցադրությունների կազմակերպման վերաբերյալ թեմատիկ, կարճամետրաժ ֆիլմերի պատրաստումը, ինչպես օրինակ «Լճաշեն. Ձրասույզ գանձարան», «Մայր աստվածություն. Անահիտից Մարիամ» և «Թանգարան-105» ցուցադրությունների համանուն ֆիլմերը: Այդ ֆիլմերը նպատակ ունեն ոչ միայն ներկայացնելու ցուցադրությունները, այլև բացահայտելու դրանց կազմակերպման գործընթացի «թաքնված» կողմերը՝ օգնելով ավելի մանրամասն ծանոթանալու թանգարանային գործունեությանը:

Վերոնշյալ ֆիլմերը օգնում են այցելուներին ավելի լավ պատկերացում կազմելու թանգարանի հավաքածուի կամ ցուցահանդեսների մասին, ակտիվացնում նրանց հետաքրքրությունը՝ հնարավորություն տալով ավելի խորությամբ ընկալելու պատմական կամ մշակութային թեմաները, որոնք ներկայացված էին թանգարանում: Թանգարանում դպրոցականների այցելության խթանման նպատակով 1960 թ.-ին գիտա-մասսայական բաժնի կողմից կապ է հաստատվում հանրակրթական դպրոցների տնօրենների, պատմության ուսուցիչների և քաղ. ժող. կրթության բաժնի հետ՝ թանգարանում դպրոցական ծրագրերի համապատասխան պարապմունքներ անցկացնելու նպատակով: Ծրագրի արդյունավետ իրականացման նպատակով թանգարանում կազմակերպվում է Երևանի հանրակրթական դպրոցների ուսուցիչների սեմինար-խորհրդակցություն (Բաժնի հաշվետվություն, 1960, 2):

1960 թ.-ից սկսել է գործել պատանի հնագետների խմբակը, իսկ մեկ տարի անց՝ 1961 թ.-ին, կազմակերպվել են ուսանողական հնագիտական խմբակներ, որոնք ղեկավարել է Հ. Մնացականյանը (Բաժնի հաշվետվություն, 1961, 2): Այս խմբակները կարևոր դեր են խաղացել ինչպես դպրոցականների, այնպես էլ ուսանողների շրջանում հնագիտության տարածման և գիտելիքների խորացման գործում: Հնագիտական խմբակների շրջանակում մասնակիցներն ակտիվորեն ներգրավվել են պեղումների աշխատանքներում, ինչը նրանց հնարավորություն է տվել անմիջականորեն ծանոթանալու գործընթացին և ստանալու մասնագիտական փորձառություն: Բացի այդ, խմբակի անդամները հնարավորություն են ունեցել պարբերաբար լսելու դասախոսություններ, որոնք թանգարանի աշխատակիցներն ու մասնագետները ներկայացրել են պեղումների և հնագիտական գտածոների վերաբերյալ:

1962 թ.-ին Հայաստանի պետական պատմական թանգարանի կողմից մեկնարկեցին շրջիկ ցուցահանդեսի կազմակերպման աշխատանքները, որոնք նպատակ ունեին արդեն թանգարանից դուրս հանրահռչակելու հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը՝ ավելի լայն լսարանի շրջանակների համար: Շուրջ 80 վահանակների վրա համառոտ, սակայն հիմնավոր կերպով ներկայացված էին Հայոց պատմության և մշակույթի հիմնական փուլերը՝ հիմնված թանգարանի մշտական ցուցադրության վրա: Այս վահանակները համալրված էին կարևոր պատմական և մշակութային տեղեկություններով, որոնք թույլ էին տալիս այցելուներին ամբողջական պատկերացում կազմել հայ ժողովրդի անցյալի մասին: Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված շրջիկ ցուցահանդեսը մեկնարկեց 1962 թ. մայիսի 21-ին՝ Ակադեմիայի ճեմասրահում՝ հոբելյանական գիտական նստաշրջանի շրջանակում (Բաժնի հաշվետվություն, 1962, 5): Շրջիկ ցուցահանդեսը տարիների ընթացքում «շրջեց» ինչպես Երևանի, այնպես էլ ամբողջ հանրապետության տարբեր դպրոցներում, թատրոններում, կինոթատրոններում, համերգասրահների ճեմասրահներում, մշակույթի պալատներում, հիմնարկ-ձեռնարկություններում և հասարակական այլ վայրերում: Ցուցահանդեսը ուղեկցվում էր բացատրական զրույցներով և թեմատիկ դասախոսություններով, ինչը զգալիորեն ընդլայնեց թանգարանի կրթական առաքելության շրջանակները: Այն թանգարանի կողմից կազմակերպված ամենաերկարատև շրջիկ ցուցահանդեսներից մեկն

էր, որը հազարավոր մարդկանց հնարավորություն ընձեռեց ծանոթանալու հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին իրենց բնակավայրերում: 1963 թ.-ից լեկտորիում է սկսել գործել նաև շրջիկ ցուցահանդեսին կից: Այսպիսով, այն չէր սահմանափակվում միայն ցուցադրությամբ, այլև վերածվում էր ակտիվ կրթական փորձի՝ այցելուներին հնարավորություն տալով ավելի լավ հասկանալու հայ ժողովրդի պատմությունը և մշակույթը: Ընդլայնելով շրջիկ ցուցահանդեսի ներկայացման ծավալները, հատկանշական է, որ այն ներկայացվել է ոչ միայն մշակութային և կրթական հաստատություններում և հիմնարկ-ձեռնարկություններում, այլև հատուկ խմբերի շրջանում, մասնավորապես 1965 թ.-ին այն մեկ օրով ցուցադրվեց Զոդի բանտարկյալների ճամբարում (Տարեկան հաշվետվություն, 1965, 10): Այս քայլը կարևոր նշանակություն ունեցավ, քանի որ այս կերպ թանգարանը հասանելի դարձավ նաև այն մարդկանց շրջանակում, ովքեր ֆիզիկապես այցելելու հնարավորություն չունեին: Այն խթան հանդիսացավ մշակութային արժեքների տարածմանը ամենատարբեր սոցիալական խմբերում:

Թանգարանի գիտակրթական ծրագրերի իրականացման համատեքստում հետաքրքիր էին այցելուների հետ տարվող զրույց-քննարկումները, որոնք տեղի էին ունենում բացատրական աշխատանքից զատ: Այդ մասին Գիտա-մասսայական աշխատանքների բաժնի կրտսեր գիտաշխատող Հ. Ոսկանյանը 1962 թ.-ի հաշվետվության մեջ նշում է. «կիրակի և մարդաշատ օրերին առանձին սրահներում անց եմ կացրել զրույց-կոնսուլտացիաներ այցելուներին հետաքրքրող թեմաների շուրջ» (Բաժնի հաշվետվություն, 1962, 3): Զրույց-կոնսուլտացիաները նպաստում էին նյութի ավելի խորացված ընկալմանը՝ հնարավորություն տալով այցելուներին հարցեր տալու, ավելի լավ հասկանալու ցուցադրվող նյութը և ստեղծելու անմիջական կապ մասնագետների հետ: Գիտա-մասսայական բաժնի կողմից իրականացվող աշխատանքները, ներառյալ հանրամատչելի դասախոսությունները, էքսկուրսիաները, գիտակրթական ծրագրերն ու մշակութային միջոցառումները, զգալիորեն նպաստեցին թանգարանի այցելությունների թվաքանակի աճին: 1963 թվականին բաժնի վարիչ Մ. Խոնդկարյանը գրում է. «Թանգարանի աճող հեղինակության մասին է վկայում այն փաստը, որ Երևանի և հանրապետության տարբեր շրջանների այցելուների կողքին մեծ թիվ են կազմում նաև Խորհրդային Միության տարբեր քաղաքներից տուրիստական ուղեգրերով թանգարան այցելած խմբերը, ինչպես նաև արտասահմանյան 32 երկրներից հյուրընկալված այցելուները» (Բաժնի հաշվետվություն, 1963, 1):

1964 թվականից, գործող խմբակների կողքին, թանգարանում կանոնավոր գործունեություն սկսեց նաև պատանի վերականգնողների խմբակը՝ Ռ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ, որի նպատակն էր ներգրավել դպրոցականներին մշակութային ժառանգության պահպանման գործում՝ զարգացնելով նրանց հմտությունները թանգարանային առարկաների վերականգնման և պահպանման ոլորտում:

Գիտա-մասսայական աշխատանքների ընդլայնման շրջանակում՝ թանգարանի մեթոդական խորհրդատվության և անմիջական աջակցության շնորհիվ, 1964 թվականին Բելինսկու անվան դպրոցում բացվեց փոքրիկ թանգարան, որը

դարձավ նախադեպ նաև մյուս դպրոցների համար (Բաժնի հաշվետվություն, 1964թ. էջ 13): Հետագա տարիներին դպրոցական թանգարաններ ստեղծվեցին Ստ. Լիսիցյանի, Հովի. Թումանյանի և մի շարք այլ դպրոցներում՝ խթանելով կրթական հաստատություններում պատմամշակութային ժառանգության պահպանման և ուսումնասիրության մշակույթը: Տարիների ընթացքում հասարակական թանգարաններ ստեղծվեցին ոչ միայն դպրոցներում, այլև համայնքների մշակույթի տներում, գործարաններում, որտեղ ժամանակի ընթացքում հավաքվել էին իրենց տարածաշրջանից գտնված հնագիտական, ազգագրական, պատմահեղափոխական ընույթի նյութեր: Այդ նյութերի հաշվառման, գիտականորեն մշակման և մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով 1979թ.-ի դեկտեմբերին թանգարանում ստեղծվեց հասարակական հիմունքներով գործող թանգարանների սեկտոր, որը գործեց մինչև 1990թ.-ը (Տարեկան հաշվետվություն, 1980, 5):

1965 թվականին Գիտա-մասսայական բաժնի նախաձեռնությամբ մեկնարկում է նաև «Հայագիտական համալսարանը», որի պարապմունքները տեղի են ունեցել Երևանում, Իջևանում և Դիլիջանում (Տարեկան հաշվետվություն, 1965,10): Այս նախաձեռնությունը նախատեսում էր հայագիտական թեմաներով դասախոսությունների ու քննարկումների շարք, որոնք բաց էին լայն հասարակության համար:

Թանգարանի մշտական ցուցադրության ընդհանուր բացատրական տեքստերից զատ, տարեցտարի ավելանում էին նաև առանձին թեմատիկ էքսկուրսիաները, որոնց թվում էին՝ «Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անին», «Հայաստանի պատմական հուշարձանները. Գառնի», «Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները 19-րդ դարի սկզբին և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանյան կայսրությանը», «Քրիստոնեության ծագումը և մուտքը Հայաստան», «Միջնադարյան Հայաստանի քաղաքները», «Զաքարյան իշխանները Հայաստանում» և այլ կարևոր պատմական թեմաներ, որոնք թույլ էին տալիս այցելուներին պատմական այս կամ այն իրադարձության վերաբերյալ առավել խորը տեղեկատվություն ստանալ:

Գիտա-մասսայական բաժնի աշխատանքների ակտիվությամբ պայմանավորված՝ հանրակրթական դպրոցների, համալսարանների, ձեռնարկությունների և զբոսաշրջային ընկերությունների հետ սերտ համագործակցության և իրազեկման աշխատանքների շնորհիվ 1968 թվականին թանգարան է այցելել 170,000 մարդ, և իրականացվել է 1,393 բացատրական աշխատանք (Տարեկան հաշվետվություն, 1968, 5): 1976 թվականին այդ ցուցանիշը հասել է 216,614 այցելուի և 3,270 բացատրական աշխատանքների (Տարեկան հաշվետվություն 1976թ, 10): Ավելի մանրամասն տես կցված աղյուսակում (Աղյուսակ 1):

Կանոնավոր կերպով իրականացվող դասախոսություններին, կինոդիտումներին և խմբակներին զուգահեռ, ընդլայնելով գիտա-կրթական ծրագրերի լսարանը, 1976թ.-ին իրականացվեց միջոցառումների շարք զինծառայողների հետ: Այս քայլը կարևոր էր, քանի որ այն հնարավորություն տվեց զինվորականներին, որոնք հաճախ ժամանակի և տեղաշարժման սահմանափակումների խնդիր ու-

նեին, առավել մոտիկից ծանոթանալ մշակութային ժառանգության և պատմության կարևորագույն թեմաներին:

Քանի որ գիտա-մասսայական բաժնի աշխատանքների շնորհիվ տարեցտարի ավելանում էին ինչպես այցելուների թիվը, այնպես էլ մասսայական ծրագրերի ծավալը, առաջացավ անհրաժեշտություն գիտա-մասսայական բաժնից առանձնացնելու էքսկուրսիոն հատվածը: 1972 թվականին գիտա-մասսայական բաժնին զուգահեռ ստեղծվեց Էքսկուրսիոն բյուրո, որը, սակայն, 1981 թ.-ից կրկին միավորվեց, այս անգամ «Գիտա-մասսայական, էքսկուրսիոն բաժին» անվամբ: Ավելին, 1981 թվականին թանգարանում ստեղծվեց արտաթանգարանային և շրջիկ ցուցահանդեսների սեկտոր: Սեկտորի անմիջական մասնակցությամբ տարբեր ժամանակահատվածներում գործող շրջիկ ցուցադրություններին ավելացվեցին «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին», «Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում», «Հին քարի դարից մինչև մեր օրերը», «Օրբելի եղբայրների գործունեությունը Հայրենական պատերազմի տարիներին» և այլ թեմատիկ ցուցահանդեսներ: Այս զարգացումը կարևոր նշանակություն ունեցավ թանգարանի գործունեության ընդլայնման և հասարակական նշանակության բարձրացման համար, քանի որ շրջիկ ցուցադրությունները թույլ տվեցին թանգարանի հավաքածուներն ու թեմատիկ ցուցադրությունները հասանելի դարձնել ավելի լայն լսարանների, այլ քաղաքներում ու համայնքներում:

1982 թվականին թանգարանի հիմնական բաժիններին կից ստեղծվեց թանգարանագիտության գիտամեթոդական բաժին, որն ուներ հինգ սեկտոր՝ ցուցադրությունների գիտական մշակման և պրոպագանդման, գիտա-մասսայական, գիտա-ֆոնդային, հասարակական հիմունքներով գործող թանգարանների և աշխատանքի նորմավորման ու պլանավորման (Տարեկան հաշվետվություն, 1982, 5): Այս բաժինը կարևոր դեր խաղաց թանգարանի գործունեության համակարգման և զարգացման գործում: Սեկտորների միջոցով իրականացվեցին ցուցադրությունների գիտական մշակման ու հանրայնացման, գիտա-մասսայական գործունեության ընդլայնման ու ֆոնդային հավաքածուների համալրման նոր մոտեցումներ, ինչը նպաստեց թանգարանի կայացմանը որպես գիտահետազոտական ու կրթական կենտրոն: Սեկտորը գործեց մինչև 1990 թ.-ը:

Ձեռնարկվող բազմաբնույթ միջոցառումների և գիտա-կրթական նախագծերի շնորհիվ թանգարանի այցելուների թիվը 1980-ականների կեսերից աննախադեպ աճ գրանցեց: 1986 թ. թանգարանն ընդունել է իր 105-ամյա գործունեության ընթացքում ռեկորդային թվով այցելու՝ **269.374 և անցկացվել է 5332 բացատրական աշխատանք:** Հաշվետու տարում բաժնի կողմից կազմակերպվել է նաև 101 միջոցառում ինչպես թանգարանի տարածքում, այնպես էլ դրա սահմաններից դուրս (Տարեկան հաշվետվություն, 1986, 9)**:**

1988 թվականից հետո երկրում ծավալված ազգային և քաղաքական ակտիվ գործընթացների պատճառով, որոնք ներառում էին փոփոխություններ հասարակական կյանքում և պետական համակարգում, թանգարանի այցելուների թիվը զգալիորեն նվազեց: Այս տարիներին զանգվածային ցույցերը, բողոքի գործողությունները և քաղաքական փոփոխությունները, սոցիալ-տնտեսական բարդ իրավի-

ճակները ազդեցին ոչ միայն երկրի ներքին վիճակի, այլև մշակութային հաստատությունների այցելման վրա: Այսպես, 1989-ին Հայաստանի պատմության պետական թանգարանը ունեցավ 104. 902 այցելու, 1990-ին՝ 61.538, 1991-ին՝ 47.821, 1992-ին՝ 20.328, 1993թ-ին՝ 11.184 (Տարեկան հաշվետվություններ, 1989–1993): 1994-ից հետո տարեցտարի կրկին նկատվում է այցելության թվաքանակի աճ:

Չնայած գիտա-մասսայական և ցուցադրական աշխատանքների շարունակաբար իրականացմանը, այնուամենայնիվ այցելուների թվաքանակի կտրուկ նվազումը հանգեցրեց նաև վաճառված տոմսերից գոյացած գումարների նվազմանը, որի հետևանքով 1991թ.-ին կրճատվեց գիտա-մասսայական և էքսկուրսիոն աշխատանքների կազմակերպման բաժինը, քանի որ աշխատում էր ինքնաֆինանսավորմամբ (Հրամանագիրք, 2003): Բաժնի 11 աշխատակիցներ ժամանակավորապես տեղափոխվեցին այլ բաժիններ, իսկ թանգարանը հանրության հետ կապելու և այցելուների ապահովման գործում զգալի աշխատանք կատարեց արտաթանգարանային աշխատանքների բաժինը: Մեկ տարի անց, բաժինը վերանվանվեց՝ գիտա-մասսայական և արտաթանգարանային աշխատանքների, իսկ 2003թ.-ի հուլիսի 30-ի թիվ 39 հրամանով Գիտա-մասսայական և արտաթանգարանային աշխատանքների կազմակերպման բաժինը վերանվանվել է Էքսկուրսիոն աշխատանքների կազմակերպման բաժին: Չնայած 1990-ից սկսված շրջափակմանը, էներգետիկ ճգնաժամին, ծանր սոցիալ-տնտեսական պայմաններին և այցելուների թվաքանակի էական անկմանը, թանգարանը շարունակել է իր հիմնարար առաքելության իրականացումը: Չեն դադարել աշխատանքները նաև թանգարանի գործունեության հանրայնացման ուղղությամբ:

1990-ական թվականներից, հանրության ավելի լայն հատվածի թանգարան այցելելու հնարավորությունները մեծացնելու նպատակով սահմանվեց պետական տոներին, հիշատակի օրերին և մասնագիտական տոն օրերին անվճար մուտքի հնարավորություն ընձեռելու պրակտիկա: Օրինակ՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատկման օրը, ՀՀ անկախության հռչակման օրը, Թանգարանների միջազգային օրը, իսկ 1999 թվականից՝ նաև Եվրոպական ժառանգության օրերը հնարավորություն էին տալիս քաղաքացիներին ավելի մոտիկից ծանոթանալու իրենց երկրի պատմությանը, մշակութային ժառանգությանը՝ առանց մուտքի վճարի:

Անկախության հռչակումից հետո թանգարանի կողմից կազմակերպվող դասախոսությունների կողքին սկսեցին կազմակերպվել նաև Սբ. Ջատիկին, Համբարձմանը և այլ ազգային տոներին նվիրված միջոցառումներ, որոնք նպատակ ունեին օգնելու մարդկանց խորությամբ ճանաչել հայկական ավանդույթները, ծեսերը, ազգային տոներն ու մշակութային արժեքները, ինչպես նաև խորացնելու նրանց հետաքրքրությունը հայրենիքի պատմության ու մշակույթի նկատմամբ: Այս միջոցառումները ոչ միայն կրթական նշանակություն ունեին, այլև նպաստում էին հայկական ազգային ինքնության պահպանմանն ու տարածմանը:

2002–2004թթ.-ին, թանգարանի վերանորոգման աշխատանքներով պայմանավորված, մշտական ցուցադրության սրահները փակվեցին, իսկ ցուցասրահների վերաբացումը տեղի ունեցավ աստիճանաբար՝ մի քանի տարվա ընթացքում:

Դրանով էր պայմանավորված 2005–2010 թթ. այցելությունների թվաքանակի նվազումը. 2005՝ 17.281, 2006՝ 24.335, 2007՝ 30.008, 2008՝ 25826 այցելու, 2009՝ 24.800 (Տարեկան հաշվետվություններ, 2005–2009): Վերանորոգման և ցուցասրահների ժամանակավոր փակման հետևանքով այցելությունների թվի կրճատումը տրամաբանական էր, սակայն այն նաև ցույց է տալիս, որ թանգարանի մշտական ցուցադրության վերաբացումը կարևոր դեր ունեցավ այցելությունների թիվը վերականգնելու գործում:

Մշտական ցուցադրության ամբողջական վերաբացումից հետո թանգարանը ավելի ակտիվորեն ներգրավվեց հանրապետական և միջազգային բազմաբնույթ նախաձեռնությունների մեջ: Սա դրսևորվեց տարբեր ցուցահանդեսների կազմակերպման, միջոցառումների իրականացման միջոցով, ինչպես նաև միջազգային գործընկերների հետ համագործակցություններով: Թանգարանը դարձավ ոչ միայն ազգային մշակութային կարևոր կենտրոն, այլև միջմշակութային երկխոսության մասնակից, ինչը հնարավորություն տվեց հավաքածուները ներկայացնելու նաև միջազգային հանրությանը:

Հիշատակության է արժանի այդ ժամանակահատվածում զբոսաշրջային ընկերությունների հետ համակարգված աշխատանքների մեկնարկը, որի կարևոր արդյունքներից մեկը հանդիսացավ զբոսավարների վերապատրաստումը թանգարանի աշխատակիցների կողմից, ինչը հնարավորություն տվեց զբոսավարներին վարելու էքսկուրսիաներ թանգարանում: Ավելին, գաղափարը զարգացնելով, ծրագիրը ընդլայնվեց՝ ընդգրկելով նաև միջազգային զբոսաշրջային շուկան, և Հայաստանի պատմության թանգարանի կողմից իրականացվեցին զբոսավարների վերապատրաստումներ օտարերկրյա զբոսավարների համար:

Մասնագիտական հանրույթի շրջանակում Հայաստանի պատմության թանգարանի գործունեության հանրահռչակման և փորձի փոխանակման տեսանկյունից կարևոր էր 2012-ին Տոկիոյի մշակութային արժեքների ազգային հետազոտական ինստիտուտի հետ համատեղ իրականացված հնագիտական բրոնզե առարկաների, ինչպես նաև տեքստիլի պահպանմանն ու վերականգնմանը նվիրված հայ-ճապոնական սեմինարները (Տարեկան հաշվետվություն, 2012, 6): Սեմինարներն իրականացվել են Հայաստանում ճապոնական հիմնադրամի և ՀՀ մշակույթի նախարարության միջև կնքված հուշագրի շրջանակում:

2012 թվականին թանգարանը միացավ «Մուտքը՝ գրքով» ակցիային, որի նպատակն էր խրախուսել մարդկանց այցելել թանգարաններ՝ բերելով գրքեր: Այս ակցիայի շրջանակներում թանգարանը մեկնարկային տարում հավաքեց 165 կտոր գիրք: Սա կարևոր նախաձեռնություն էր, քանի որ այն միավորեց մշակութային և կրթական արժեքները՝ կարդալու խրախուսմամբ: Գիրք բերելու միջոցով մարդիկ կարող էին ստանալ անվճար մուտք թանգարան, ինչը մեծապես նպաստեց ինչպես գրականության տարածմանը, այնպես էլ մշակութային ժառանգությունը ավելի լայն հանրությանը ներկայացնելուն:

2012–2017 թթ.-ին ՀՀ Սփյուռքի նախարարության հետ համատեղ իրականացվում է «Արի տուն» ծրագիրը, որի շրջանակներում կազմակերպվում էին հատուկ շրջայցեր՝ մեր հայրենակիցներին Հայաստանի մշակութային և պատմական ժա-

ռանգությանը ծանոթացնելու նպատակով: Այս ծրագիրն ուղղված էր սփյուռքահայերին՝ նպատակ ունենալով ցույց տալ նրանց երկրի պատմությունն ու մշակույթը, ինչպես նաև խորացնել կապը հայրենիքի հետ:

2014 թվականից Հայաստանի պատմության թանգարանը և Հայաստանի հանրապետական կուսակցությունը համատեղ մեկնարկեցին հատուկ ծրագիր, որի նպատակը Երևանում և սահմանամերձ գյուղերում ապրող անապահով ընտանիքների դպրոցական երեխաների համար անվճար շրջայցերի կազմակերպումն էր: Ծրագիրը սկսվեց Երևան քաղաքի ծայրամասերում գտնվող դպրոցներից, ապա ընդլայնվելով ընդգրկեց նաև սահմանամերձ գյուղերի դպրոցականներին (Հարցազրույց): Այս շրջայցերը կազմակերպվում էին ամեն տարի հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության օրը, ինչը թույլ էր տալիս երեխաներին՝ անկախ նրանց բնակության վայրից, մոտիկից ծանոթանալ Հայաստանի պատմությանը և մշակութային ժառանգությանը:

2015 թվականից ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ մեկնարկեց նորակոչիկների և զինվորների համար հատուկ շրջայցերի կազմակերպումը Հայաստանի պատմության թանգարանում, որի նպատակը զինվորներին հայոց պատմությանը, մշակույթին և հերոսական անցյալին ծանոթացնելն էր: Այս ծրագրի շրջանակում, միայն մեկնարկի տարում, ավելի քան 7000 զինվոր այցելեց թանգարան: Թանգարանի մի քանի աշխատակիցներ այդ միջոցառման շրջանակներում արժանացան ՀՀ Պաշտպանության նախարարության պատվոգրերի (Հարցազրույց):

Այս ժամանակաշրջանում հատկապես ակտիվ իրականացվում էին թեմատիկ դասախոսություն-շրջայցերը թանգարանի ցուցասրահներում: Դասախոսություններն ու շրջայցերը կազմակերպվում էին այնպես, որ մասնակիցները ոչ միայն տեսողական կերպով ծանոթանային ցուցադրվող նմուշներին, այլ նաև ստանային խոր գիտական ու պատմական բացատրություններ դրանց նշանակության ու պատմության վերաբերյալ:

Թանգարանի աշխատակիցների և ոլորտի լավագույն մասնագետների ներգրավվածությամբ իրականացվող թեմատիկ դասախոսությունները ավելի մեծ պարբերականությամբ շարունակվեցին նաև հետագա տարիներին և գործում են մինչ օրս: 2020 թվականից հետո դասախոսությունների ձևաչափը որոշակի փոփոխություններ է կրել: Ժամանակավոր ցուցադրություններում ներկայացվող նյութը առավել հանգամանալից հանրությանը ներկայացնելու նպատակով դասախոսությունները հիմնականում կազմակերպվեցին հենց այդ ցուցադրությունների շրջանակում: Այս փոփոխությունը նպաստեց, որ թանգարանի թեմատիկ դասախոսությունները առավել թիրախավորված և կոնկրետ դառնան:

2025 թվականից սկսած թանգարանը շարունակեց ընդլայնել դասախոսությունների աշխարհագրությունը՝ հրավիրելով միջազգային հեղինակավոր մասնագետների: Միջազգային մասնագետների մասնակցությունը հնարավորություն է տվել նոր մոտեցումների ու գաղափարների տարածման, ինչպես նաև համագործակցության զարգացման համար, ինչը մեծապես նպաստել է թանգարանի գիտական և կրթական դերի ընդլայնմանը:

Բացի դասախոսություններից և հանրային այլ միջոցառումներից, թանգարանում պարբերաբար կազմակերպվել են նաև գիտական նստաշրջաններ: Գիտական նստաշրջանները կազմակերպվել են ոչ միայն թանգարանի գիտական կազմի ներգրավմամբ, այլև տարբեր ոլորտների այլ մասնագետների մասնակցությամբ՝ հնարավորություն տալով տարբեր փորձագետների փորձի և գիտելիքների փոխանակման համար: Այսպես օրինակ, 1981 թ.-ին տեղի ունեցավ Հայաստանի պատմության պետական թանգարանի և Երևանի հիմնադրման պատմության «Էրեբունի» թանգարանի միացյալ գիտական նստաշրջանը, որի ընթացքում 22 զեկույց ներկայացվեց (Տարեկան հաշվետվություն, 1981, 4), 1996 թ.-ին թանգարանը ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ համատեղ կազմակերպել է «Ազգագրական հանդես-100» գիտական նստաշրջանը՝ նվիրված դարասկզբին հայ մշակութային ու գիտական կյանքում կարևոր դեր ունեցած հանդեսի 100-ամյակին (Տարեկան հաշվետվություն, 1996, 5):

2021 թվականից գիտաժողովները առավել պարբերական բնույթ կրեցին. 2021 թվականին Հայաստանի Հանրապետության անկախության 30-ամյա հոբելյանի շրջանակում կազմակերպվեց գիտաժողով, որի ընթացքում ավելի քան 80 հետազոտող ներկայացրեց հնագիտության, ազգագրության, նոր և նորագույն շրջանի պատմության, մշակութաբանության, թանգարանագիտության բնագավառներին վերաբերող զեկուցումներ: 2023 թվականին, թանգարանի նախաձեռնությամբ, կազմակերպվեցին Սյունիքի և Արցախի ազատագրական պայքարի 300-ամյակին նվիրված գիտաժողովը, ինչպես նաև երկու միջազգային գիտաժողով՝ «Ձինվորը, քուրմն ու առևտրականը. վերակարգության հնագիտական դրսևորումները բարդ հասարակություններում» խորագրով և «Դրամի աղբյուրագիտական արժեքը» գիտաժողովը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության ազգային արժույթի՝ դրամի թողարկման 30-ամյակին: Միջազգային գիտաժողովները թանգարանում ունեն մեծ կարևորություն, քանի որ դրանք մի կողմից հնարավորություն են տալիս ներկայացնելու երկրի պատմական, մշակութային և գիտական արժեքները, մյուս կողմից՝ նպաստում են միջազգային համագործակցությանը և փորձի փոխանակմանը տարբեր երկրների մասնագետների ու գիտնականների միջև:

2024-ին Հայաստանի պատմության թանգարանի, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Ազգային հետազոտությունների Մոսկվայի շինարարական պետական համալսարանի նախաձեռնությամբ կազմակերպվեց «Անիի հնագիտական դպրոցը» խորագրով միջազգային գիտաժողովը: Նույն տարում Հայաստանի պատմության թանգարանը և ԻԿՕՄ-ի հայկական թանգարանների ազգային կոմիտեն, համագործակցելով Թանգարանների միջազգային խորհրդի Անձնակազմի վերապատրաստման (ICOM ICTOP) և ԻԿՕՄ-ի թանգարանային էթիկայի միջազգային կոմիտեների հետ, կազմակերպեցին «Թանգարանային պրոֆեսիոնալիզմն ու էթիկան մարտահրավերների ժամանակ» միջազգային թանգարանագիտական գիտաժողովը:

Թանգարանի կողմից կազմակերպվող միջոցառումները գիտական ուղղվածությունից զատ վերջին տարիներին դրսևորվում են նաև կրթական-ժամանցային

ձևաչափով՝ ներգրավելով հատկապես երիտասարդ լսարանին: Առավել հաճախակի են դարձել թանգարանում կազմակերպվող համերգային ծրագրերը. արժանահիշատակ են 2022 թվականին «Զենք, պայքար, մշակույթ» ժամանակավոր ցուցադրության բացման շրջանակում ՀՀ ոստիկանության զորքերի երգչախմբի մասնակցությամբ կազմակերպված համերգային ծրագիրը՝ ռազմահայրենասիրական երգերի կատարմամբ: 2024-ին Հայաստանի պատմության թանգարանում «Անի. Բագրատունիների տիեզերահռչակ մայրաքաղաք» մշտական ցուցադրության վերաբացման շրջանակում կազմակերպվեց համերգ՝ «Անին երգերի մեջ» խորագրով: Աննախադեպ էր հատկապես թանգարանի կամարաշարի ներքո հայկական բանակի կազմավորման 30-ամյակին նվիրված «Բանակի ակունքերում» ցուցադրության բացման շրջանակում ռազմապարերի բաց դասը՝ պարուսույց, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Գագիկ Գինոսյանի ղեկավարությամբ: Այս միջոցառումը նպատակ ուներ երիտասարդ սերնդին առավել կապելու ռազմահայրենասիրական երգ ու պարի, ազգային ինքնության և մեր ժողովրդի հերոսական պատմության հետ:

Հայաստանի պատմության թանգարանը ակտիվ մասնակցությամբ հանդես է գալիս նաև մշակութային միջազգային իրադարձությունների համատեքստում: Այդպիսի նախաձեռնությունները, ինչպիսիք են «Թանգարանների միջազգային օր», «Թանգարանների գիշեր» և «Եվրոպական ժառանգության օրեր», «Եվրոպական հնագիտության օրեր» ակցիաները, նպաստում են հասարակության լայն շրջանակներում թանգարանների մասին իրազեկվածության բարձրացմանը, նոր լսարանի ներգրավմանը, ինչպես նաև մշակութային ժառանգության պահպանման կարևորության մասին գիտակցության ձևավորմանը:

2020 թվականի ընթացքում ամբողջ աշխարհում տարածված COVID-19 համավարակը մեծ ազդեցություն ունեցավ մշակութային և հասարակական կյանքի տարբեր ոլորտների վրա, այդ թվում՝ թանգարանների աշխատանքի: Արդյունքում, թանգարանները ստիպված էին ակտիվորեն օգտվել թվային միջավայրերից՝ իրենց գործունեությունը շարունակելու համար: Պաշտոնական կայքէջերը և սոցիալական ցանցերը դարձան եզակի միջոցներ, որոնց շնորհիվ թանգարանները կարող էին պահպանել կապը այցելուների հետ:

2020 թվականին, համավարակի սահմանափակումներին զուգահեռ, թանգարանում սկսվեցին շինարարական աշխատանքներ, որի արդյունքում մշտական ցուցադրությունը նորից հավաքվեց: Մշտական ցուցադրության նորացված վերաբացմանը զուգահեռ՝ 2021 թվականին թանգարանի կառուցվածքում իրականացվեցին որոշակի փոփոխություններ, որոնք միտված էին բարձրացնելու թանգարանի՝ որպես կրթական կառույցի, դերակատարությունը և հանրահռչակման աշխատանքների կարևորությունը՝ հասարակության լայն շերտերի իրազեկման շրջանակում: Համաձայն նոր կառուցվածքի՝ ստեղծվեց թանգարանի զարգացման ուղղությունը, որի մեջ ներառվեցին նաև Հասարակայնության հետ կապերի պատասխանատուի, մարքեթինգի և հուշանվերային խանութի պատասխանատուի, միջազգային կապերի և մասնագիտական զարգացման պատասխանատուի, միջոցառումների և կամավորների ներգրավման պատասխանատուի, տեղեկատվա-

կան կենտրոնի պատասխանատուի հաստիքները, իսկ թանգարանի էքսկուրսիոն աշխատանքների կազմակերպման բաժինը վերափոխվեց Կրթական ծրագրերի և մեկնաբանման աշխատանքների կազմակերպման բաժնի:

Թանգարանների միջազգային խորհրդի 2022թ.-ի տարեկան վեհաժողովում ընդունվեց թանգարանների նոր սահմանում, այն է՝ «Թանգարանը շահույթ չհետապնդող, մշտական հաստատություն է, որը ծառայում է հասարակությանը՝ ուսումնասիրելով, հավաքագրելով, պահպանելով, մեկնաբանելով և ցուցադրելով նյութական և ոչ նյութական ժառանգությունը: Բաց լինելով հասարակության համար՝ թանգարանները մատչելի և ներառական են, խթանում են բազմազանությունն ու կայունությունը: Դրանք գործում և հաղորդակցվում են էթիկապես, մասնագիտականորեն և համայնքների մասնակցությամբ՝ ապահովելով բազմազան փորձառություններ կրթության, վայելքի, մտորելու և գիտելիքի փոխանակման համար» (https://icom.museum/en/resources/standards-guidelines/museum-definition): Ինչպես երևում է նոր սահմանումից, թանգարանային կրթությունը դիտարկվում է որպես թանգարանային գործունեության առաջնահերթ գործառույթ:

Թանգարանային կրթության հիմնական նպատակներից մեկը ոչ ֆորմալ կրթության միջոցով դրա շարունակականության ապահովումն է, որը հնարավորություն է ընձեռնում ավելի խորացված և բազմակողմանի գիտելիքներ ձեռք բերել և օգտագործելով թանգարանի ռեսուրսները՝ ցուցադրություններ, ցուցանմուշներ, միջոցառումներ և ինտերակտիվ կրթական միջոցներ, նպաստել կրթական փորձառության զարգացմանը:

Հայաստանի պատմության թանգարանի ինտերակտիվ կրթական ծրագրերի զարգացումը սկսվեց 2020-ից, երբ թանգարանում մեկնարկեցին վերանորոգման աշխատանքները և այցելուների համար մշտական ցուցադրության սրահները դեռևս հասանելի չէին: Այս իրավիճակում թանգարանը կարևոր քայլեր ձեռնարկեց կրթական գործունեությունը շարունակելու համար: Արդյունքում, ստեղծվեց «Թանգարանը՝ դպրոցում» կրթական արկղիկը, որը պարունակում էր ցուցանմուշների կրկնօրինակներ և դիդակտիկ նյութեր: Թանգարանի աշխատակիցները շրջում էին հանրակրթական դպրոցներով և արկղիկի միջոցով ծանոթացնում դպրոցական երեխաներին թանգարանի գործունեությանը և ցուցանմուշներին: Դաս-այցերի շրջանակում երեխաներին հնարավորություն էր տրվում շոշափելու ցուցանմուշների կրկնօրինակները, իսկ դիդակտիկ նյութերը մշակվել էին հատուկ ուսուցողական նպատակներով՝ աջակցելու ուսուցիչներին և աշակերտներին թանգարանի նյութի ընկալման գործընթացում՝ ապահովելով այն առավել հասանելի և հետաքրքիր ձևով ներկայացնելու հնարավորությունը:

Թանգարանի կողմից կազմակերպված այս նախաձեռնությունը իսկապես արդյունավետ միջոց էր, որը ոչ միայն հնարավորություն տվեց պահել կապը հանրության հետ, այլև միտված էր կրթական գործընթացի պահպանմանը: Զարգացնելով կրթական արկղիկի գաղափարը՝ մշակվեցին մի շարք թեմատիկ ծրագրեր, որոնք հնարավորություն ընձեռեցին կրկնօրինակների միջոցով ծանոթացնելու հին քարի դարի, բրոնզե դարաշրջանի, անտիկ շրջանի և պատմական մյուս ժամանակափուլերի հետ:

Կրթական ծրագրերի գործընթացը առավել ակտիվ շարունակվեց մշտական և ժամանակավոր ցուցադրությունների բացման շրջանակում: Այս ծրագրերն ուղղված էին այն նպատակին, որ թանգարանի նյութերն ու ցուցադրությունները հասանելի լինեն ավելի լայն լսարանի՝ հատկապես դպրոցականների, ուսանողների և ընտանիքների համար, ովքեր կարիք ունեն ավելի անմիջական և ներգրավված մոտեցումների: Կրթական ծրագրերը մշակվում էին ինչպես ժամանակավոր ցուցադրությունների շրջանակում, այնպես էլ մշտական: Այսօր թանգարանն ունի շուրջ երկու տասնյակ ինտերակտիվ կրթական ծրագրեր, որոնք հիմնականում նախատեսված են դպրոցահասակ երեխաների համար՝ «Ճանաչիր երկիրդ տարազով», «Կավե ձեռքեր», «Ասեղնագործություն և նորաձևություն. հինը՝ նորովի» , «Լցնենք արքայական գանձարանը. Արտաշեսյան թագավորություն», «Զարդերի մոգական ուժը», «Հին աստվածներ», «Արցախի բառն ու բանը», «Երկրի բրոնզեդարյան գանձերը» և այլն: Այս ծրագրերի շարքում հիշատակության է արժանի «Արցախի բառն ու բանը» կրթական ծրագիրը, որը մշակվեց 2023 թվականին՝ Արցախի հայերի բռնի տեղահանումից հետո: Ծրագիրն ամբողջությամբ իրականացվում է արցախյան բարբառով և Արցախից տեղահանված մասնագետի միջոցով: «Արցախի բառն ու բանը» ծրագրի նպատակն է վերականգնել պատմական գիտելիքներն ու մշակութային արժեքները, որոնք վերաբերում էին Արցախին՝ նրա պատմությանը, մշակույթին և ազգագրությանը, միաժամանակ աջակցելով նոր պայմաններում ապաստանած մարդկանց հիշողության և ինքնությունը պահպանելու գործընթացին: Թանգարանը հանրության բոլոր շերտերի համար հասանելի դարձնելու նպատակով մշակվեց ժեստերի լեզվով էքսկուրսիոն հատուկ ծրագիր խուլ կամ վատ լսող այցելուների համար, որն իրականացնում էր հենց լսողության խնդիր ունեցող թանգարանի աշխատակցուհին: Արդյունքում, թանգարանը ապահովում է հասանելիություն բոլոր այցելուների համար՝ անկախ նրանց ֆիզիկական կարողություններից, և միաժամանակ խթանում է ներառականությունը, հասարակության տարբեր խմբերի մասնակցությունը մշակութային ու կրթական գործընթացներին: Այս նպատակով 2018 թ.-ին կառուցվեց նաև դեպի ցուցասրահներ բարձրացող մարդատար վերելակ, ինչպես նաև ցուցասրահների մուտքերի մոտ թեքահարթակներ, որոնք հնարավորություն են ընձեռնում հենաշարժողական խնդիրներ ունեցող այցելուներին հեշտորեն տեղաշարժվել թանգարանում:

Այսպիսով, Հայաստանի պատմության թանգարանում գիտա-մասսայական և գիտա-կրթական աշխատանքների կազմակերպումն ու զարգացումը շուրջ մեկ դար շարունակ եղել է թանգարանի գործունեության առանցքային ուղղություններից մեկը: Դասախոսությունները, կինոլեկտորիումը, շրջիկ ցուցահանդեսները, ինչպես նաև դպրոցների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը, կրթական ծրագրերը և զանազան այլ միջոցառումները նպաստել են ոչ միայն թանգարանի հավաքածուների հանրահռչակմանը, այլև դրանց կրթական ներուժի առավել արդյունավետ գործարկմանը, ինչի արդյունքում ապահովվել է այցելուների թվաքանակի կայուն աճ և թանգարանի դերի ամրապնդում հանրության շրջանում:

Հանրահռչակման գործիքակազմերի կիրառում՝ տպագրական նյութերից մինչև թվային հարթակներ

Հայաստանի պատմության թանգարանի կողմից իրականացվող գիտա-մասսայական աշխատանքները չեն սահմանափակվել միայն գիտակրթական ծրագրերով. մասնավորապես դեռ խորհրդային տարիներից ակտիվորեն կիրառվել է տպագրական նյութերի միջոցով հանրահռչակման պրակտիկան: 1960 թվականին թանգարանի շենքի ճակատային հատվածում փակցվել է չորս մեծադիր գովազդային վահանակ, որոնք դարձել են թանգարանի գործունեության հանրահռչակման կարևոր բաղադրիչ: 1961 թ.-ի հաշվետվության մեջ (Բաժնի հաշվետվություն, 1961, 4) նշվում է, որ թանգարանի աշխատակիցները նաև տեղադրել են գովազդային պաստառներ Երևանի տարբեր հյուրանոցներում: Այսպիսի պաստառները ոչ միայն տեղեկացրել են թանգարանում գործող ցուցահանդեսների մասին, այլև խթանել են զբոսաշրջիկների ու տարբեր այցելու խմբերի հետաքրքրությունը՝ ընդլայնելով թանգարանի այցելությունների շրջանակը:

Թանգարանի գործունեության մասին հանրությանը ավելի լայն տեղեկատվություն տրամադրելու նպատակով գիտա-մասսայական բաժնի աշխատակիցները տարիներ շարունակ հոդվածներ են տպագրել ինչպես հանրապետական, այնպես էլ համամիութենական թերթերում և ամսագրերում, ինչը կարևոր գործիք էր թանգարանի աշխատանքները հանրայնացնելու և իրազեկելու համար: Առավել պարբերական բնույթ էր կրում «Տեղեկագիր» ամսագրում թանգարանի ցուցադրությունների տարբեր հատվածների և գիտա-մասսայական աշխատանքների ներկայացումը: Օր. 1961 թ. Վ. Խաչատրյանը հրապարակել է հոդված՝ նվիրված թանգարանի 19-րդ դարի ցուցադրությանը (Բաժնի հաշվետվություն, 1961, 9), 1963. Մ. Խոնդկարյանը ներկայացրել է «Կուլտուր-լուսավորական և մասսայական աշխատանքը Պետական պատմական թանգարանում» հոդվածը և այլն: Իսկ թանգարանի գիտական բաժինների աշխատակիցների կողմից յուրաքանչյուր տարի տասնյակ մասնագիտական հոդվածներ էին տպագրում գիտական ամսագրերում: Այս հոդվածները անդրադառնում էին տարբեր հնագիտական, ազգագրական, դրամագիտական և այլ պատմագիտական թեմաների, որոնք ուղղված էին թանգարանի հավաքածուների ու ցուցադրությունների խորացված գիտական վերլուծությանը:

Հայաստանի պատմության թանգարանը իր ավելի քան հարյուրամյա գործունեության ընթացքում մշտապես հիմնվել է գիտական հետազոտությունների վրա: Գիտական արդյունքների հրապարակման նպատակով հիմնվեց «Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի» պարբերականը, որի առաջին համարը լույս է տեսավ 1948 թվականին: Երկար, շուրջ քառասունամյա դադարից հետո պարբերականը վերսկսեց հրատարակումը 2021-ին: Թանգարանը, նպատակ ունենալով ամրագրել գիտական ուսումնասիրությունների արդյունքները և դրանք դարձնել հանրության սեփականությունը, ամեն տարի հրատարակում է տեղական և միջազգային ցուցադրությունների, ինչպես նաև հավաքածուների վերաբերյալ առանձին պատկերագրքեր, թեմատիկ մենագրութ-

յուններ: Այս հրատարակությունները ներկայացնում են Հայաստանի պատմության թանգարանի հարուստ հավաքածուների բազմաշերտությունը: Ներկայում թանգարանի հրատարակությունների թիվը գերազանցում է վեց տասնյակը:

1961թ.-ին բաժնի կողմից կազմվեց Հայաստանի պետական պատմական թանգարանի 90 էջից բաղկացած «Ուղեցույցը», որի միջոցով կարելի էր պատկերացում կազմել թանգարանի մշտական ցուցասրահներում ներկայացված առարկաների և ցուցադրության հայեցակարգի մասին: Ուղեցույցում զետեղված էին ոչ միայն տեքստային տեղեկություններ, այլև ցուցասրահներից լուսանկարներ և հատակագծեր, ինչը թույլ էր տալիս ավելի պարզ և ընկալելի կերպով ներկայացնել թանգարանի սրահների կառուցվածքը և ցուցանմուշները (Ուղեցույց, 1961): Մեկ տարի անց հրատարակվեց նաև ուղեցույցի ռուսերեն, իսկ 1966-ին՝ անգլերեն և ֆրանսերեն տարբերակները: 1963թ.-ին կազմվեց «Հայաստանի պատմության թանգարան» բուկլետը հայերեն լեզվով, իսկ 1964-ին՝ նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով: Այս բոլոր տպագրական միջոցառումները միտված էին թանգարանի հանրահռչակմանը, ինչպես նաև ապահովում էին տեղեկությունների հասանելիություն մի շարք լեզուներով:

1981 թվականին մեծ ծավալով հրատարակվեց «Հայաստանի պատմության պետական թանգարան» բուկլետը: Բուկլետը նաև նպաստեց թանգարանի գործունեության ավելի լայն ճանաչմանը ոչ միայն Հայաստանում, այլև արտերկրում և ծառայեց որպես տեղեկատվական միջոց՝ ճանաչելի դարձնելով թանգարանի առաքելությունն ու նշանակությունը իր այցելուների համար:

1990-ից սկսած ծանր սոցիալ-տնտեսական և էներգետիկ դժվարությունների պայմաններում, թանգարանը կանգ չի առել իր առաքելության և գործունեության հանրայնացման գործում: Այս համատեքստում հիշատակության է արժանի 1995 թվականին «Հայաստանի պատմության պետական թանգարան» ալբոմի անգլերեն հրատարակությունը, որը ներառում էր թանգարանի հիմնադրման պատմությունը, հավաքածուները և 120 գունավոր ու սև-սպիտակ լուսանկարներ: Հրատարակությունն իրականացվեց Բոստոնի «ԱԼՄԱ» հաստատության նախագահ Հայկ Տեր-Մանվելյանի հովանավորությամբ, Սանկտ Պետերբուրգում՝ 5000 օրինակով, որոնցից 3500-ը տրամադրվել էին թանգարանին: Այս հրատարակությունը թանգարանին հնարավորություն տվեց ներկայացնել իր հավաքածուն միջազգային հանրությանը նոր մակարդակով և ընդլայնել իր ճանաչելությունը մշակութային հանրույթի մեջ (Տարեկան հաշվետվություն, 1995, 5):

Վերջին տարիներին, տպագրական տեխնոլոգիաների շարունակական զարգացմամբ, Հայաստանի պատմության թանգարանը կիրառեց նաև մեծադիր պաստառների տպագրությունը՝ ցուցահանդեսների հանրահռչակման նպատակով: Հատկապես թանգարանի շենքի ճակատային և հարակից տարածքներում տեղադրվեցին գովազդային պաստառներ, որոնք ուղղված էին ցուցադրությունների հասանելիության ապահովմանը և հանրային հետաքրքրության բարձրացմանը: Միջազգային ցուցահանդեսների համատեքստում նման գովազդային պաստառներ տեղադրվել են նաև Երևանի տարբեր քաղաքային հատվածներում՝ ներառյալ գովազդային վահանակները և մետրոպոլիտենի կայարանները:

1960-ականներից սկսած, թանգարանը, տպագրական մամուլի հնարավորություններից օգտվելուց բացի, իր գործունեության հանրահռչակման նպատակով ակտիվորեն ներգրավվել է նաև ռադիոյով և հեռուստատեսությամբ իրականացվող ծրագրերում: Թանգարանի գիտական և գիտա-մասսայական բաժինների աշխատակիցները պարբերաբար հանդես են եկել հեռուստատեսային ելույթներով՝ ներկայացնելով թանգարանի դերն ու նշանակությունը հասարակության պատմական գիտակցության ձևավորման և հայրենասիրական դաստիարակության գործում: Հեռուստատեսության զարգացման և հեռուստահաղորդումների ընդլայնմանը զուգահեռ, ավելացան նաև թանգարանին և թանգարանում իրականացվող աշխատանքների հեռուստատեսային անդրադարձները, ինչը հնարավորություն տվեց ավելի լայն հասարակությանը ծանոթանալու թանգարանի գործունեությանը: Իսկ թվային հարթակների առաջացմանը զուգընթաց, թանգարանը սկսեց նաև ներգրավվել էլեկտրոնային լրատվականների աշխատանքներում, ինչը նոր հնարավորություն բացեց թանգարանի գործունեության ներկայացման և հանրության հետ կապի առումով: Վերջին տարիներին այդ անդրադարձներն ու լուսաբանումները տարեկան հասնում են մի քանի հարյուրի:

Ակտիվ օգտագործելով հանրության հետ աշխատանքի բոլոր ձևերը և ետ չմնալով ժամանակի պահանջներից՝ 2000-ական թվականների սկզբներին Հայաստանի պատմության թանգարանը մուտք գործեց նաև թվային աշխարհ՝ հասարակությանը հասանելի դարձնելով https://historymuseum.am/ պաշտոնական կայքը, իսկ 2015-ից՝ Ֆեյսբուք սոցիալական ցանցում պաշտոնական էջը (ավելի ուշ նաև Յութուբյան ալիքում, Ինստագրամում, Թվիթերում և այլ հարթակներում): Կայքէջերի և սոցիալական ցանցերի կարևորությունը թանգարաններում որպես հանրահռչակման գործիք անհերքելի է, քանի որ դրանք ծառայում են որպես լայնածավալ, ժամանակակից ու հասանելի հարթակներ՝ թանգարանների գործունեությունը հանրությանը ներկայացնելու համար: Այս հարթակների միջոցով թանգարանները կարող են անմիջապես կապի մեջ լինել իրենց այցելուների և հավանական այցելուների հետ, տեղեկացնել նոր ցուցադրությունների, միջոցառումների կամ կրթական ծրագրերի մասին, ինչպես նաև ներգրավել երիտասարդ սերնդին, որը հաճախ ավելի ակտիվ է սոցիալական ցանցերում: Թանգարանի թվային հարթակներում պարբերաբար տեղադրվել և առ այսօր շարունակում է համալրվել թանգարանի գործունեությանն ու հավաքածուներին վերաբերող տեղեկատվությամբ:

Այսպիսով, տասնամյակների ընթացքում հանրահռչակման նպատակով՝ ժամանակաշրջանի բնորոշ գործիքակազմերի համակարգված կիրառությունը հանդիսանում է Հայաստանի պատմության թանգարանի մասսայական աշխատանքի հիմնական բաղադրիչ և համակողմանիորեն նպաստում է նրա կրթական և գիտական ծրագրերի ճանաչելիության բարձրացմանը, ինչպես նաև հասարակության մեջ թանգարանի դերի ամրապնդմանը:

Հուշանվերային արտադրանքի կիրառումը մարքեթինգային և հանրահռչակման ռազմավարություններում

Թանգարանի կողմից իրականացվող մարքեթինգային աշխատանքների կարևոր օղակներից մեկը դարձավ հուշանվերների արտադրությունը, որոնք հանդիսանում են ոչ միայն այցելուներին թանգարանի մասին «հիշեցնող» առարկաներ, այլ նաև թանգարանի ճանաչելիությունը մեծացնելու արդյունավետ միջոց: Դեռևս 1962թ.-ի հաշվետվություններով կարդում ենք, որ գիտա-մասսայական բաժնի կողմից պատրաստված թանգարանի ցուցադրությանը վերաբերող նկարաշարը լույս է տեսել 10000 օրինակով և նույն տարում 7000-ը վաճառվել է (Բաժնի հաշվետվություն, 1962, 6): Սա վկայում է այն մասին, որ, չնայած մարքեթինգային սահմանափակ հնարավորություններին, վաճառքի նպատակով բուկլետների և տեղեկատվական այլ տպագիր նյութերի արտադրությունն ու վաճառքը կիրառելի էր նաև խորհրդային տարիներին, և արդեն իսկ նշյալ ժամակաշրջանում թանգարանը կարևորել է թանգարանային հուշանվերների վաճառքի նշանակությունը: Ավելին, 1965թ.-ի տարեկան հաշվետվության մեջ կարդում ենք գիտա-մասսայական բաժնի վարիչ Մ. Խոնդկարյանը գրում է. «…Մասսայական աշխատանքների թերություններից մեկն էլ պետք է համարել այն, որ թանգարանը դեռևս չի կազմակերպել հուշանվերների արտադրություն, որն այնքան կարևոր է մասսաների սպասարկման գործում» (Տարեկան հաշվետվություն, 1965, 12):

Հուշանվերային արտադրանքը զարգացնելու և ընդլայնելու նպատակով 2016թ.-ին թանգարանում ստեղծվեց հուշանվերային խանութ: Իր հիմնադրման առաջին իսկ օրվանից այն որդեգրեց կարևոր քաղաքականություն՝ վաճառակետում ներկայացնել միայն այն հուշանվերները, որոնք ստեղծվում են հենց թանգարանի կողմից և վերավաճառքի նպատակով որևէ այլ հուշանվեր չի ընդունվում: Այս քաղաքականությունը նպաստում է թանգարանի ինքնատիպության պահպանմանը և ստեղծագործական աշխատանքի զարգացմանը: Թանգարանի կողմից ստեղծվող հուշանվերները արտացոլում են հավաքածուն, պատմությունը, մշակութային ժառանգությունը կամ ցուցադրությունները, ինչը դրանք դարձնում է արժեքավոր և յուրահատուկ: Այս հուշանվերները նաև կրթական բովանդակություն ունեն, քանի որ յուրաքանչյուր հուշանվեր կարող է արտացոլել որոշակի պատմական իրադարձություն կամ ներկայացնել թանգարանի հավաքածուների կարևոր բաղադրիչները, որոնց մասին այցելուները կարող են տեղեկանալ նաև դրանց միջոցով:

Թանգարանի հուշանվերների քանակն ու տեսականին յուրաքանչյուր տարի ավելանում է մեծ ծավալով, ինչպես նաև մշակվեց դրանց արտադրության նոր մոտեցում՝ յուրաքանչյուր նոր բացվող ժամանակավոր ցուցադրությունների շրջանակում առաջարկել տվյալ ցուցադրության հետ կապված թեմատիկ հուշանվերներ: Թանգարանի հուշանվերների ցանկում կարելի է գտնել թեմատիկ բացիկներ, ծիսական ռիտոնների կրկնօրինակներ, հնագիտական և ազգագրական զարդերի կրկնօրինակներ, արձանիկներ, կաշվե դրամապանակներ, պայուսակներ, խաղ-գլուխկոտրուկներ և այլն: Թանգարանային հուշանվերը ավելին է, քան պարզապես ապրանք, այն կարող է հանդիսանալ այցելուի և թանգարանի միջև

հոգևոր կամ էմոցիոնալ մի կամուրջ, որը չի սահմանափակվում միայն նյութական արժեքով, այլ նաև զգացողություններով ու հիշողություններով:

Հայաստանի պատմության թանգարանի կողմից իրականացվող մարքեթինգային աշխատանքները շատ կարևոր դեր ունեն նրա հանրային ճանաչման ու հնարավոր այցելուների ներգրավման գործում: Այս աշխատանքների շրջանակում նաև իրականացվում է համագործակցություն այլ մշակութային ու կրթական կազմակերպությունների, ինչպես նաև հովանավորների հետ՝ միջոցառումների և ցուցահանդեսների շրջանակում: Հովանավորների հետ աշխատանքները ոչ միայն միտված են աջակցություն կամ ռեսուրսներ ձեռք բերելուն, այլ նաև օգնում են նախագծերի գովազդին և թանգարանի հանրահռչակմանը և հնարավորություններ են ստեղծում տարբեր լսարաններ ներգրավելու համար:

Այսպիսով, Հայաստանի պատմության թանգարանում ձևավորված մարքեթինգային գործիքակազմը, մասնավորապես հուշանվերային արտադրությունը, ծառայում է թանգարանի առաքելության արդյունավետ իրականացմանը՝ բարձրացնելով հանրային իրազեկվածությունը, ակտիվացնելով կրթական ներուժը և ընդլայնելով այցելուների ներգրավվածությունը: Հուշանվերային արտադրությունը ոչ միայն ամրապնդում է մարքեթինգային ռազմավարությունների արդյունավետությունը, այլև դառնում թանգարանի գիտական և կրթական գործունեության արդյունքների առարկայական արտահայտություն:

Եզրակացություն

Հայաստանի պատմության թանգարանի գիտա-մասսայական, կրթական և հանրահռչակման գործունեությունը շուրջ մեկ դար շարունակ եղել է թանգարանի հիմնական ուղղություններից մեկը, որի հիմքում մշտապես կանգնած է գիտական հենքը: Դասախոսությունները, կինոլեկտորիումները, շրջիկ ցուցահանդեսները, ինչպես նաև դպրոցների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը, գիտական նստաշրջանները, կրթական ծրագրերը և զանազան այլ միջոցառումները նպաստել են ոչ միայն թանգարանի հավաքածուների հանրահռչակմանը, այլև դրանց կրթական ներուժի առավել արդյունավետ գործարկմանը, ինչպես նաև ապահովել այցելուների թվաքանակի կայուն աճ և թանգարանի դերի ամրապնդում հասարակության մեջ:

Մարքեթինգային և հանրահռչակման գործիքակազմերի շարունակական զարգացումը՝ հուշանվերային արտադրությունից մինչև գովազդ, տպագրական նյութերից մինչև թվային հարթակների կիրառումը, էականորեն ամրապնդել է Հայաստանի պատմության թանգարանի հանրային և կրթական ազդեցությունը, ընդլայնելով հասարակության իրազեկվածությունը և թանգարանի հասանելիությունը: Միևնույն ժամանակ, միջազգային համագործակցությունն ու փորձի փոխանակումը հնարավորություն են տվել կիրառել նոր մոտեցումներ, զարգացնել համագործակցային ծրագրեր և ընդլայնել թանգարանի գիտական ու կրթական դերը՝ ամրապնդելով նրա դիրքը հանրային և միջազգային հարթակներում:

Հայաստանի պատմության թանգարանի կողմից իրականացվող միջոցառումների և նախագծերի ծավալը, դրանց ձևաչափերի բազմազանությունը և բո-

վանդակային հարստությունը չեն կարող ամբողջությամբ ներառվել մեկ գիտական հոդվածի շրջանակում: Հետևաբար, անհրաժեշտություն է հետագա ուսումնասիրություններում այս ոլորտները դիտարկել որպես առանձին վերլուծական միավորներ՝ նպատակ ունենալով համակողմանի գնահատել դրանց ազդեցությունը հասարակության պատմամշակութային իրազեկվածության և կրթական զարգացման վրա:

Աղյուսակ 1.

Տարեթիվ	Այցելուների թվաքանակ	Բացատրական աշխատանքներ
1965 թ.	112.000	
1966 թ.	120.000	1170
1967 թ.	140.000	
1968 թ.	170.000	1363
1969 թ.	140.000	1266
1975 թ.	248.500	3615
1976 թ.	216.614	3270
1977 թ.	134.722	1786
1978 թ.	213.550	2955
1979 թ.	222.216	4500
1980 թ.	215.258	4263
1981 թ.	208.746	3802
1982 թ.	219.189	4139
1983 թ.	221.398	3747
1984 թ.	257.700	5183
1985 թ.	256.697	5280
1986 թ.	269.396	5338
1987 թ.	221.933	5057
1988 թ.	250.048	4125
1989 թ.	104.902	1832
1990 թ.	61.538	547
1991 թ.	47.821	550
1992 թ.	20.328	252
1993թ	11.184	264
1994 թ.	24.905	705
1995 թ.	23.641	799
1996 թ.	25.746	930

Տարեթիվ	Այցելուների թվաքանակ	Բացատրական աշխատանքներ
1997 թ.	21.021	1125
1998 թ.	31.806	1304
1999 թ.	32.378	1382
2000 թ.	30.365	1225
2001 թ.	28.458	884
2002 թ.	1.158	23
2003 թ.	1.182	126
2004 թ.	14.025	764
2005 թ.	17.281	481
2006 թ.	24.335	629
200 7թ.	58.817	630
2008 թ.	25.826	656
2009 թ.	24.800	817
2010 թ.	34.126	990
201 1թ.	38.127	1162
2012 թ.	40.527	1157
2013 թ.	41.282	1288
2014 թ.	51.914	1885
2015 թ.	68.379	2075
2016 թ.	68.864	2075
2017 թ.	80.576	2953
2018 թ.	82.089	3663
2019 թ.	106.886	4298
2020 թ.	8465	284
2021 թ.	6370	313
2022 թ.	60614	2739
2023 թ.	79027	3595
2024 թ.	100. 038	4019

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գիտա-մասսայական բաժնի տարեկան հաշվետվություն, 1960–1964 թթ., ֆ. 1, ց. 1:

Հայաստանի պատմության թանգարանի հրամանագիրք, 2003–2019 թթ.:

Հայաստանի պատմության թանգարանի տարեկան հաշվետվություն, Երևան, 2003–2024 թթ., ֆոնդ 1, ցուցակ 2:

Հայաստանի պատմության պետական թանգարանի տարեկան հաշվետվություն և վիճ. հաշվետվություն աշխատակիցների թվի և պաշտոնների մասին, Երևան, 1965 – 2003 թթ., ֆոնդ 1, ցուցակ 2:

Հարցազրույց Հայաստանի պատմության թանգարանի հնագիտության բաժնի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Արմինե Զորաբյանի հետ:

Պատմության Պետական թանգարանի հրամանագիրք, 1939–2002թթ.:

Ուղեցույց. Հայաստանի պետական պատմական թանգարան, Երևան, 1961թ.:

https://icom.museum/en/resources/standards-guidelines/museum-definition/

Arusyak Ghazaryan

History Museum of Armenia

ghazaryana.historymuseum@gmail.com

SCIENTIFIC AND EDUCATIONAL ACTIVITIES OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA: PATHWAYS TO HERITAGE DISSEMINATION

Keywords: History Museum of Armenia, scientific and mass works, educational programs, publicity, marketing

Museums, as scientific and cultural centres, play an important role in the preservation and dissemination of cultural heritage. In recent years, the activities of museums have been aimed not only at the preservation of collections but also at enhancing their educational and scientific significance. Scientific-popular initiatives, outreach and educational programs, as well as marketing tools, have become an integral part of the effective functioning of museums, contributing to the increased social relevance and accessibility of museums to a broader audience.

The aim of our study is to present the scientific, educational, and popularization activities of the History Museum of Armenia, highlighting their role in the preservation, dissemination, and broad public accessibility of cultural heritage.

The main objectives of the work are: to examine and analyze the mechanisms through which scientific and public activities and educational programs contribute to the fulfillment of the museum's mission; to study the accumulated experience of the History Museum of Armenia in promoting cultural heritage and ensuring its accessibility to wide segments of the population; to assess the effectiveness of applying marketing tools in museum activities; and to systematize and scientifically present the diverse formats of scientific-educational and popularization activities applied in the History Museum of Armenia over the course of more than a century, emphasizing their role in educational development, cultural formation, and public engagement.

Арусяк Казарян

Музей Истории Армении

ghazaryana.historymuseum@gmail.com

НАУЧНО-ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ: СПОСОБЫ ПОПУЛЯРИЗАЦИИ НАСЛЕДИЯ

Ключевые слова: Музей истории Армении, научно-массовая работа, образовательные программы, реклама, маркетинг

Музеи, как научно-культурные центры, играют важную роль в сохранении и распространении культурного наследия. В последние годы деятельность музеев направлена не только на сохранение коллекций, но и на повышение их образовательной и научной значимости. Научно-популярная работа, программы популяризации и образования, а также маркетинговые инструменты стали неотъемлемой частью эффективной деятельности музеев, способствуя повышению их социальной значимости и доступности для широкой общественности.

Цель нашего исследования заключается в представлении научно-массовой, популяризаторской и образовательной деятельности Музея истории Армении с целью показать их роль в сохранении культурного наследия, его распространения и обеспечения широкого доступа к нему для общественности.

Основные задачи работы заключаются в рассмотрении и анализе механизмов, с помощью которых научно-массовая деятельность и образовательные программы способствуют реализации миссии музея; изучении накопленного опыта Музея истории Армении в области популяризации культурного наследия и обеспечения его доступности для широких слоев населения, рассмотрении эффективности применения маркетинговых инструментов в музейной деятельности, а также систематизации и научном представлении разнообразных форматов научно-образовательной и популяризаторской деятельности, применяемых в Музее истории Армении на протяжении более ста лет, с акцентом на их роль в образовательном развитии общества, культурном воспитании и обеспечении вовлеченности общественности.